ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

18.09.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ մթերքի պլանավորման և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ս. Պետրոսյան,

ՀՀ ՋՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի ՊԾ պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1.	«Արմեն-Համիկ Եղբայրներ ՀՁ » ՍՊԸ
2.	«ՍԱՎԱ» ՍՊԸ
3.	«Ստանդարտ-2014» ՍՊԸ
4.	«Վարդան Վարդազարյան» Ա/Ձ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 . «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) բացառությամբ «Արմեն-Համիկ Եղբայրներ ՀՁ » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ի, որտեղ՝

1. վերոնշյալ ընթացակարգը կազմակերպող պատվիրատուի անվանման փոխարեն նշված է ընթացակարգի մասնակցի անվանումը:

2.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 20.09.2019թ. գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 24.09.2019թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Հովհաննիսյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակից.

Հավելված 1.

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների			
					անվանումը	գինը		Հ/Հ	անվանումները	Գումար	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով			առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	մածուն (Մածուն)	կգ	7880	2 513 720							
2	հնդկաձավար (Հնդկաձավար)	կգ	32163	9 612 877.44	«Վարդան Վարդազարյան» Ա/Ձ	7 879 935	9 455 922	1	«Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ	10 050 937.5	12 061 125
								2	«Վարդան Վարդազարյան» Ա/Ձ	7 879 935	9 455 922
3	ոսպ (Ոսպ)	կգ	21600	9 914 400	«Ստանդարտ-2014» ՍՊԸ	5 292 000	6 350 400	1	«Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ	5 760 000	6 912 000
								2	«Ստանդարտ-2014» ՍՊԸ	5 292 000	6 350 400
4	ոլոռ (Ոլոռ)	կգ	11081	2 592 954				1	«Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ » ՍՊԸ	2 243 902.5	2 692 683
5	լոբի, հատիկավոր (Լոբի հատիկավոր)	կգ	13134	8 786 646	«Ստանդարտ-2014» ՍՊԸ	7 092 360	8 510 832	1	«Ստանդարտ-2014» ՍՊԸ	7 092 360	8 510 832
								2	«ՍԱՎԱ» ՍՊԸ	7 320 000	8 784 000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/ ճիշտ է և համապատասխանում է հրավերի պայմաններին, բացառությամբ «Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի 3-րդ չափաբաժնի ընդհանուր ցանկի թվերով և տառերով արտահայտված տվյալների, որոնք միմյանց չեն համապատասխանում: Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4 րդ մասի, եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք պետք է ընդունվում տառերով գրված գումարը, և տվյալ դեպքում մասնակցի առաջարկած առանց ԱԱՀ գնի և ավելացված արժեքի հարկի գումարման արդյունքում չի ստացվում մասնակցի առաջարկած ընդհանուր գնի ցանկում տառերով նշված գումարը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել մասնակցի հայտը 3-րդ չափաբաժնի մասով իսկ գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի/ ոչ մի հայտ չի ներկայացվել/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժնի մասով հրավերի պայմաններին համապատասխան /բավարարող/ հայտ են ներկայացրել մեկական մասնակիցներ, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 25.09.2019թ. մասնակիցներին ծանուցել, որ 30.09.2019թ. ժամը 11:20-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպված են բանակցություններ: Բանակցություններին ներկայացել է միայն «Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ լիազորված անձը, որը սակայն չի նվազեցրել կազմակերպության կողմից ներկայացրած գնային առաջարկը, ուստի մասնակիցների գնային առաջարկները մնացին անփոփոխ: Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Հովհաննիսյան)

4.1.30.09.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել հետևյալ մասնակիցները՝ տես **Հավելված 1**:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Հովհաննիսյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/72» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել ոչ ուշ քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{00}-ին ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ա. Կարապետյան

Գնումները համակարգող Ա. Հովհաննիսյան